ՀԱՂՈՐԴԱՐԱՐ – Հարգելի ռադիոունկնդիրներ, այսօր «Կարծիք» հաղորդաշարի մեր հերթական հյուրն է գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, Հանրապետության պետական մրցանակի դափնեկիր Սուրեն Շտիկյանը։ Պարոն Շտիկյան, մենք գիտենք, որ դուք զբաղվել եք Ղևոնդ Ալիշանի կյանքն ու գործն ուսումնասիրելով, այդ առիթով ունեք մի քանի աշխատություններ, բայց գիտենք, որ վերջին տարիներին ուսումնասիրության առարկա եք դարձրել Ամենայն Հայոց Նորոգ հանգուցյալ կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Առաջինի գործունեությունը։ Հենց այս կապակցությամբ էլ ահա, թույլ տվեք տալ առաջին հարցը. ինչ եք անում դուք հիմա։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Արդեն ավարտել եմ մեր հոգելույս Վազգեն կաթողիկոսի աշխատությունների «Մատենագիտությունը», որտեղ խստիվ ժամանակագրական կարգով տրված են հանգուցյալ Հայրապետի խնկելի գրչի արգասիքը հանդիսացող բոլոր աշխատությունները, հոդվածները, թարգմանությունները։ Բերված է տվյալ գործի վերնագիրը, հրատարակության տեղը, թիվը, հնարավորության դեպքում՝ ամիսն ու օրը։ Նշվում են վերահրատարակություններն ու թարգմանությունները, անհրաժեշտության դեպքում, տվյալ հոդվածի կամ աշխատության վերաբերյալ տրվում են կարճառոտ ծանոթագրություններ։ «Մատենագիտությունը» օգտակար տեղեկատվական ձեռնարկ կարող է լինել յուրաքանչյուրի համար, ով կցանկանա մասնագիտական տեղեկություններ ստանալ հանգուցյալ կաթողիկոսի ցանկացած հոդվածի կամ աշխատության մասին։ Այստեղ նշեմ, որ Նորին Սուրբ Օծությունը այսօր մեզ է ներկայանում ամենատարբեր բնույթ ու բովանդակություն ունեցող շուրջ երկու հարյուր անուն գործերով, որոնք գրվել են հայերեն ու ռումիներեն լեզուներով, իսկ այդ գործերի թվում հազվագյուտ չեն այնպիսիները, որոնք մի քանի վերահրատարակությունների կամ արտատպությունների են արժանացել։ Նախատեսում եմ այս «Մատենագիտությունը» ընթերցողների սեղանին դնել այս տարվա օգոստոսին, այսինքն՝ Վեհափառ Հայրապետի մահվան տարելիցի առթիվ։

ՀԱՂՈՐԴԱՐԱՐ – Պարոն Շտիկյան, իսկ դուք ինչպես եք պատկերացնում այդ աշխատության հրատարակության հարցը։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Ահա այստեղ է, որ մենք շատ ասելիքներ կունենանք։ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայմաններում այդ հարցը լուծված է հիացնող անմիջականությամբ։ Այսինքն՝ տվյալ աշխատությունը ներկայացվում է Գերագույն Հոգևոր Խորհրդին, որն էլ այն հանձնարարում է Հոգևոր Խորհրդի իրավասու անդամներից մեկին՝ կարծիքի։ Հոգևոր Խորհրդի հաջորդ նիստում լսվում է նրա կարծիքը և եթե այն դրական է, ապա աշխատությունը «Տպարան, ի շարվածքի» մակագրությամբ իջեցվում է արտադրություն։ Ահա, համառոտակի, բոլորը։ Իհարկե, Գերագույն Հոգևոր խորհրդի այդ նիստի ժամանակ լինում են առաջարկություններ, ցանկություններ, այլևայլ բնույթի դիտողություններ, բայց աշխատանքային գործընթացը այն է, ինչ ասացի, և, որ շատ կարևոր է, այս ձևով մշակված գործընթացը մեծ արագություն է հաղորդում հրատարակության գործին։ Բավական է ասեմ միայն, որ իմ կազմած և 1990 թվականին լույս տեսած՝ Վազգեն կաթողիկոսի «Ժամանակագրության» մեքենագիր թղթապանակը այս ճանապարհը անցավ ընդամենը մեկ ու կես-երկու ամսվա ընթացքում։ Այստեղ, ինչպես ասում են, համապատասխան մեկնաբանություններն ավելորդ են։

ՀԱՂՈՐԴԱՐԱՐ – Ցավոք սրտի, դրությունը բոլորովին այլ է մեզ մոտ, այսինքն՝ աշխարհիկ իրականության պայմաններում։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Հենց այդ մասին է, որ կամենում եմ լայն խոսակցություն բանալ և այդ խոսակցությունն ավելի խորանիստ դարձնելու համար պետք է սկսեմ փոքր-ինչ հեռվից։ Հին վարչակարգի տարիներին գոյություն ուներ հեղինակների աշխատությունների հրատարակության պետականորեն մշակված մի ձև, որի էությունը հանրահայտ էր ու հանրածանոթ։ Այսինքն՝ հեղինակն իր ավարտած գործի թղթապանակը ներկայացնում էր «Պետհրատի» կամ «Քաղհրատի» համապատասխան բաժիններին, այդ թղթապանակը տրվում էր արտաքին գրախոսության և դրական գրախոսական ստանալու դեպքում գիրքը խմբագրվում էր, ապա՝ իջեցվում արտադրություն։ Իհարկե, այստեղ էլ լինում էին կարգազանցության դեպքեր, լինում էին օրինականության խախտումներ, լինում էին ձեռագրեր, որոնց հրատարակությունը ձգձգվում էր հաճախ տարիներով, բայց աշխատանքային կանոնակարգը այն էր, ինչ ասացի և այդ կանոնակարգը լավ-վատ արդարացնում էր իրեն։ Բոլորովին այլ, և ինչ-որ

տարօրինակ կարգավիճակ է ստեղծվել հիմա։ Գիրքն ավարտելուց և թղթապանակում ամփոփելուց հետո հեղինակը, ով էլ դա լինի և գրական-հասարակական ինչպիսի դիրք ու ճանաչում էլ ունենա, պետք է կարողանա այստեղ կամ արտասահմանում մի մեծահարուստ գտնել, և նրան խնդրել-աղաչել, որ հովանավորի իր գրքի հրատարակությունը, այսինքն՝ վճարի գրքի համար նախատեսվելիք դրամական ծախսերը։ Եվ եթե ավելացնեմ, որ ամենահամեստ ծավալ ունեցող գիրքը տպագրելու համար հրատարակիչները հեղինակին միջին հաշվով շուրջ 800 դոլարի պահանջ են ներկայացնում, ապա իմ ասելիքը կամբողջանա։

ՀԱՂՈՐԴԱՐԱՐ – Պարոն Շտիկյան, դուք շատ համեստ թիվ ասացիք։ Մեզ մոտ գրքեր են հրատարակվել, որոնց համար հեղինակները կարողացել են իրենց հովանավորներից մի քանի հազար դոլար պոկել, քանզի այդ են պահանջել հրատարակիչները։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Ահա տեսնո՞ւմ եք։ Իսկ գրահրատարակության այս եղանակը, ինչպես արդեն կռահում եք, իր հետ անխուսափելիորեն բերում է խիստ անպատվաբեր մի գործելաեղանակ. այն է՝ պիտի կարողանան իրենց աշխատությունները հրատարակել այն գրողներն ու գիտնականները, որոնք զանազան ներելի ու աններելի եղանակներով կկարողանան հովանավորներ գտնել, այսինքն՝ ինչ-որ քանակով դոլարներ պոկել այս կամ այն փողատերից։ Իսկ սա էլ իր հերթին նշանակում է, որ հրատարակվելու մեծ բախտին առաջին հերթին կարժանանան հիմնականում այն գործերը, որոնց հեղինակները ճարպիկ ու ձեռներեց են եղել, և ոչ թե այն աշխատությունները, որոնք գեղարվեստական կամ գիտական առումով մեծ արժեք են ներկայացնում։

ՀԱՂՈՐԴԱՐԱՐ – Պարոն Շտիկյան, դուք, անշուշտ, իրավացի եք, բայց ձեզ չի՞ թվում արդյոք, որ շատ խիստ եք դնում հարցը։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Որպես պատասխան կարող եմ բերել հենց իմ օրինակը։ Արդեն ավարտել եմ Ղևոնդ Ալիշանի գործերի մատենագիտության առաջին գիրքը, որը տարիների աշխատանքի արդյունք է և որը, խնդրում եմ ներեք իմ անհամեստության համար, եզակի արժեք է ներկայացնում։ Գիրք տպագրելու այժմյան տրամաբանությունից

ելնելով, ես պետք է կարողանամ ֆինանսական հովանավոր գտնել։ Սա նշանակում է, որ պետք է ինչ-որ կերպ կապեր ստեղծեմ որևէ փողատիրոջ հետ, այլևայլ եղանակներով աշխատեմ դուր գալ նրան, նրա մտերմությունը շահելու համար դառնամ նրա կամակատարը, նսեմանամ ու ստորանամ, որպեսզի վաստակեմ նրա համակրանքը և այլն։ Ավելորդ է թերևս ասելը, որ նման բան ես երբեք չեմ անի, որն էլ նշանակում է, որ իմ կազմած Ղևոնդ Ալիշանի մատենագիտության առաջին գիրքը առաջիկա տարիներին ընթերցողների սեղանին չի հասնելու։ Եվ շատ էլ չեմ սխալվի, եթե ասեմ, որ նկարագրած վիճակում այսօր գտնվում են գրեթե բոլոր հայազգի մտավորականները։ Այստեղից էլ ահա գալիս է իմ հարցադրման խստությունը։

ՀԱՂՈՐԴԱՐԱՐ – Այո, վիճակը մխիթարականներից չէ։ Եվ այս անագորույն վիճակը իր խորքում նույնիսկ ողբերգականորեն-երգիծական նստվածք ունի։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Ակամայից հիշում ես երգիծաբան Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանների» հանրահայտ բանաստեղծին։ Հիշում եք, անշուշտ, որ ներկայանալով Աբիսողոմ աղային, նա ստիպված է լինում դիմել թույլատրելի ու անթույլատրելի մի շարք միջոցների, որովհետև ցանկանում էր հրատարակել իր գիրքը և «կխնդրեմ, որ տպագրության ստակը ձերդ մեծապատվությունը տա»։ Այսինքն՝ Պարոնյանը բարձրացրել է հենց այն խնդիրը, որը նույն ուժգնությամբ ծառացել է մեր առջև նաև այսօր։ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները», ինչպես հայտնի է, հրատարակվել է 1880 թվականին, այսինքն՝ շուրջ 120 տարի առաջ։ Եվ այսօր, անկախ Հայաստանի փաստացի գոյության, անկախության գործընթացի հարաճուն զարգացման, մեր երկրի՝ իբրև այդպիսին համընդհանուր ճանաչման ու համակրանքի արժանանալու պայմաններում, ցավալի է որպես փաստ արձանագրել այն տխուր իրողությունը, որ գիտա-գեղարվեստական գրականության հրատարակությունն իրականացնելու խնդրում մենք հետ ենք շպրտվել մինչև Պարոնյանի ժամանակները, այսինքն՝ շուրջ 120 տարի։

ՀԱՂՈՐԴԱՐԱՐ – Պարոն Շտիկյան, մի պահ համաձայնենք ձեր խստաշունչ հարցադրումների հետ և զարգացնենք այդ իսկ խնդիրը։ Այս դեպքում դուք ինչպես եք

պատկերացնում երիտասարդ գրողների ու գիտնականների գրքերի հրատարակության հարցը։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Չեմ կարող ասել շատ բարվոք, որովհետև, եթե հովանավոր է փնտրում ասենք ճանաչված բանաստեղծը կամ արձակագիրը, կամ կոչումներով ու տիտղոսներով զարդարված ու մեկից ավելի աշխատություններով իրեն հռչակած մտավորականը, ապա այս դեպքում դրությունը համեմատաբար հեշտանում է։ Բայց պատկերացրեք այն երիտասարդի վիճակը, որն ընդամենը կարողացել է հանդես գալ մեր այլևայլ պարբերականներում, արժանացել է դրվատանքի և դրանից թևավորված, պատրաստել է իր գործերի անդրանիկ թղթապանակը հրատարակության համար։ Այսինքն՝ նա դեռ պատկառելիորեն ճանաչված անուն չէ, կոչումներով զարդարված հայտնի մտավորական չէ, լայն կապեր ու ծանոթություններ ունեցող գործիչ չէ։ Նա ընդամենը իր առաջին ժողովածուն կամ գիտական ուսումնասիրությունը հրատարակել ցանկացող մտավորական է։ Եվ միթե պարզ չէ, որ այսպիսի անհայտ մեկը, ինչքան էլ նրա առաջնեկը բազմախոստում լինի, հովանավոր չի կարողանալու գտնել իր համար և ուրեմն չի հրատարակելու իր անդրանիկ գործը՝ այստեղից բխող բոլոր ցավալի հետևանքներով։ Չէ՞ որ նրա այդ գիրքը կարող է նշանավոր երևույթ լինել հայ գրականության կամ հայագիտության բնագավառում, և, ուրեմն, մնայուն արժեք ներկայացնել։ Իսկ մեր գրականության պատմությունը այդպիսի դաժան կորուստների մեկից ավելի օրինակներ է ավանդել մեզ։

ՀԱՂՈՐԴԱՐԱՐ – Հետաքրքիր է։ Դուք կարո՞ղ եք այդպիսի օրինակներ բերել, որպես մեր զրույցի վերջաբան։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Բերեմ միայն մեկ օրինակ, շատ չերկարացնելու համար։

Մեր գրականության դասական Մկրտիչ Պեշիկթաշլյանը իր նամակներից մեկում նշում է, որ ինքը բնավորության երկու թերություն ունի՝ «քչիկ մի ինքնասեր է» և «չի գիտեր խրտզիշ ըլլալ», այսինքն՝ մեր լեզվով ասած, չգիտե «երես վեր բերել», կամ «բերան պատռել»։ Եվ այս հանգամանքը ճակատագրական դեր խաղաց նրա ամբողջ ստեղծագործական կյանքում։ Ինքնասիրաբար հրաժարվելով հարուստ-մեծատուներից

ոսկիներ խնդրել բանաստեղծությունների իր ժողովածուն հրատարակելու համար, և մարդկային գեղեցիկ նկարագիր ունենալու հետևանքով չկարողանալով իր ստեղծագործությունները ստիպողաբար հրատարակել, նա այդպես էլ, իր ամբողջ կյանքի ընթացքում չկարողացավ իր գործերի գեթ մեկ հատիկ ժողովածու հրատարակել։ Պեշիկթաշլյանի մահվանից հետո միայն, նրա մտերիմները հավաքեցին այդպես էլ ցաքուցրիվ մնացած նրա գործերը, հրատարակեցին առանձին գրքով «Մատենագրությունք» ընդհանուր խորագրի ներքո, և նախ՝ զարմացած հայ հանրության համար պարզ դարձավ, որ այդ գործերի անվիճելիորեն գերակշիռ մասը մեր պոեզիայի գլուխգործոցներ են, իսկ ինքը՝ Պեշիկթաշլյանը մեկից ապահովեց իր անկապտելի տեղը հայ գրականության դասականների շարքում։

ՀԱՂՈՐԴԱՐԱՐ – Հետաքրքիր է։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Դուք, անշուշտ, պատկերացնում եք հարցերի ամբողջ խորությունը։ Եթե չլինեին Պեշիկթաշլյանի մտերիմները, մենք սեղանի վրա չէինք ունենալու նրա ստեղծագործությունների ժողովածուն և հայ գականությունն այսօր չէր ունենա իր դասականներից մեկին։ Թե ինչպիսի կորուստ կլիներ սա, մեկնաբանելու կարիք չկա։ Իսկ ինչու կլիներ այդպես։ Որովհետև Մկրտիչ Պեշիկթաշլյանը, ինչպես արդեն ասացի, մարդկային սովորական ինքնասիրություն ուներ, չէր կարող փող մուրալ հարուստներից և բնավորության համառություն ուներ, այսինքն՝ չէր կարողանում իր գրական հարցերը գոռում-գոչյունով լուծել։ Իսկ դուք, անշուշտ, լավ եք պատկերացնում, որ այսօրվա մեր պայմաններում մեկից ավելի կլինեն այդպիսի նկարագիր ունեցող սկսնակները, ովքեր բնականաբար չեն կարողանալու իրենց անդրանիկ և գուցե միակ գիրքը հրատարակել և ուրեմն, քանի՜-քանի՜ պեշիկթաշլյաններ ենք կորցնում մենք։

ՀԱՂՈՐԴԱՐԱՐ – Ավարտենք մեր հաղորդումը, թեև ես մնում եմ այն կարծիքին, որ ձեր հարցադրումները, պարոն Շտիկյան, շատ խիստ են։ Իսկ եթե կան ռադիոունկնդիրներ, որոնք այս առթիվ կունենան իրենց նկատումները, ապա թող դիմեն մեզ, այսինքն՝ «Կարծիք» հաղորդաշարի խմբագրությանը։ Թույլ տվեք, պարոն Շտիկյան, շնորհակալություն հայտնել հարցազրույցի համար։

ՇՏԻԿՅԱՆ Ս. – Շնորհակալություն։

1995 թ.